# Մայրենիի մայիսյան ֆլեշմոբ

4-5-րդ դասարաններ

Մուտք գործեք Google՝ ձեր կատարած աշխատանքը պահելու համար: Իմանալ ավելին

* Ցույց է տալիս, որ հարցին պատասխանելը պարտադիր է

Անուն, ազգանուն *

Շուշան Հակոբյան

Դպրոց *

Արևմտյան դպրոց

Դասարան *

- ○ 4-րդ դասարան
- ◉ 5-րդ դասարան

**1. Տրված բառերից առանձնացրո՛ւ ավելորդ բառը: Գրի՛ր, թե ինչ սկզբունքով ես ընտրել այն.**

մեծ, հսկա, վիթխարի, փոքր, խոշոր, հսկայական

Փոքր

Նշված բոլոր բառերը միմյանց հոմանիշներ են, բացի փոքր բառից:

**2. Գտի՛ր թաքնված բառը**: (*Առաջադրանքը կազմել է Հյուսիսային դպրոցի 4-րդ դասարանի սովորող Դավիթ Մարտիրոսյանը:*)




Սեբաստացի

**3. Կազմի՛ր նոր բառեր՝ բառի վերջում ավելացնելով մեկական տառ**.

վեր, սար ,գիր, շուն, վեր, լուր, սուր:

Տերև, սարք, շունչ, վերև, գինի, լուրջ, սուրբ

**4. Ո՞ր առած-ասացվածքներն են են պատկերված նկարներում.** *(Առաջադրանքը կազմել է Հյուսիսային դպրոցի 4-րդ դասարանի սովորող Օֆելի Չեյնայանը։)*

> Ով աշխատի, նա կուտի։

> Կարմիր կովը իր կաշին չի փոխի։

> Յոթ անգամ չափիր, մեկ անգամ կտրիր։

> Ամառը որ պառկես հովեր, ձմեռը կսատկեն կովեր։

> Անբանը հաց ուտելիս առողջ է, բանելիս՝ հիվանդ։

1.



2.



Յոթ անգամ չափիր, մեկ անգամ կտրիր:
Կարմիր կովը իր կաշին չի փոխի:

**5. Ի՞նչ է նշանակում «լուն ուղտ շինել» արտահայտությունը**.

- ( ) վախեցնել
- (•) չափազանցնել
- ( ) սովորեցնել

Ջնջել ընտրվածքը

**6. Որոշի՛ր, թե «**քաղցր**» բառը որ բառակապակցությունում փոխաբերական իմաստ չի արտահայտում.**

- ( ) քաղցր խոսք
- ( ) քաղցր քուն
- (•) քաղցր թեյ
- ( ) քաղցր հայացք

Ջնջել ընտրվածքը

**7.Գուշակի՛ր հանելուկը.**

Ծնվում է նա հրից, ջրից,

Մեզ ժպտում է հորիզոնից,

Ունի աղեղ յոթնալար՝

Կամրջում է դաշտ ու սար:

Ծիածան

**8. Գարնանային բառերը երեք խմբի բաժանի՛ր՝ առարկա ցույց տվող բառերի, հատկանիշ ցույց տվող բառերի, գործողություն ցույց տվող բառերի.**

ծիրանենի, գարուն, կանաչ, մայիս, ծիծեռնակ, Համբարձում, բացվել, գույնզգույն, Զատիկ, բողբոջ, արևոտ, ճամփորդել, Ծաղկազարդ, ծաղիկ, արագիլ, շոգ, ծաղկել, զատկական, մշակել:

Առարկա- գարուն, մայիս, ծիրանենի, Համբարձում, Զատիկ, բողբոջ, Ծաղկազարդ
Հատկանիշ- կանաչ, արևոտ, գույնզգույն, անձրևոտ, ցուրտ, շոգ, զատկական
Գործողություն-բացվել, ճամփորդել, ծաղկել, մշակել

**9.Պատումով կամ տեսանյութով ներկայացրո՛ւ, գովազդի՛ր քո կարդացած ամենասիրելի գիրքը, խորհո՛ւրդ տուր ընկերներիդ կարդալ այն (ամառային արձակուրդին կամ հիմա): Աշխատանքդ տեղադրի՛ր բլոգումդ, հղումն էլ՝ պատասխանի դաշտում:**

Ձեր պատասխանը

**10.** Գրի՛ր ստեղծագործական աշխատանք **«Կախարդական քաղաքը»** վերնագրով:

«Կախարդական քաղաքը»

Լինում է, չի լինում մի աղջիկ է լինում: Նա ճամփորդում է տարբեր երկրներ իր թութակի հետ: Այդ աղջկա անունը Մանե է: Մի օր Մանեն իր թուրակի հետ ընկան մի զարմանալի քաղաք: Այնտեղ նրանք տեսան մարդկանց, ովքեր կարողանում էին թռչել: Այդ երկրում մարդիկ պաղպաղակը և վաֆլին իրարից առանձին էին ուտում: Կար նաև զարմանալի կոնֆետների խանութ: Մանեին դրսից գրավեց այդ խանութը և նրանք ներս մտան: Խանութում նրանք տեսան կոնֆետներ, որոնք ոչ թե ուտում էին, այլ խմում: Իսկ ուտելու կոնֆետները դառն էին: Նրանք տեսան ադի-բուդի, որը եռանկունի տեսք ուներ և սև գույնի էր: Մանեն վախեցած դուրս եկավ խանութից:
Մեկ այլ խանութից նրանք գնեցին պաղպաղակ և գնացին խաղահրապարակ: Խաղահրապարակը շատ հետաքրքիր վայր էր, ճոճանակները օդում էին կախված: Մանեն իր թուրակի հետ կերան պաղպաղակները և ճոճորվեցին օդում: Այսպիսի տարօրինակ և կախարդական քաղաքում էին հայտնվել մեր հերոսները:

Առաջադրանքները կազմեցին Քրիստինե Շահբազյանը և 4-րդ դասարանի սովորողները։   Կարծիք, առաջարկ…

Ձեր պատասխանը

Ուղարկել

Մաքրել ձևաթուղթը

Երբեք մի մուտքագրեք գաղտնաբառերը Google Ձևաթղթերում:

Այս բովանդակությունը չի ստեղծվել և չի հաստատվել Google-ի կողմից: Հաղորդել չարաշահման մասին - Օգտագործման պայմաններ - Գաղտնիության քաղաքականություն

Google Ձևաթղթեր